Հաստատված է
ՀՀ կառավարության 2001 թվականի
Նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ

ԿԱՐԳ
գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ/ ֆինասավորման

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում է գիտնականների և գիատահետազոտական խմբերի /կոլեկտիվների/ նախաձեռնությամբ ներկայացված ու մրցույթային կարգով ընտրված գիտական, փորձակոնստրուկտորական, գիտամանկավարժական, փորձատեխնոլոգիական, նախագծակոնստրուկտորական, նախագծատեխնոլոգիական, հետախուզական հետազոտությունների մշակումների, աշխատանքների, նախագծերի/այսուհետև՝ գիտական թեմաների հայտեր/ իրականացման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից պայմանագրային /թեմատիկ/ ֆինասավորման կարգը:
2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում թեմատիկ ֆինասավորման համար հատկացումներ նախատեսվում են միայն մրցույթային կարգով ընտրված ու Հայաստանի Հանրապետության կրթության ու գիտության նախարարության /այսուհետև՝նախարարություն/ կողմից հաստատված գիտական թեմաների հայտերի ֆինանսական նախահաշիվների հիման վրա, որոնք որպես նախարարության կողմից կազմվող բյուջետային ֆինասավորման հայտի հիմնավորում և դր անբաժանելի մաս, սահմանված կարգով ներկայացվում են Հայաստանի Հանրապետության ֆինասների և էկոնոմիկայի նախարարություն մինչև բյուջետային գործընթացն սկսելը:

II. Գիտական թեմաների հայտեր ներկայացնելը և մրցույթային կարգով գիտական թեմաների հայտերի ընտրությունն ու հաստատումը:

3. Նախարարությունը գիտական թեմաների հայտերի ընտրության և հաստատման նպատակով կազմակերպում է մրցույթ» Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Հայտերի գնահատման նպատակով նախարարության կողմից սահմանված կարգով ձևավորվում են մասնագիտական փորձագիտական խորհուրդներ /այսուհետև՝խորհուրդ/: Նախարարության կողմից ընդունվում և խորհուրդներին են տրամադրվում գիտական թեմաների հայտերը /այսուհետև՝ մրցույթի հայտեր/: խորհուրդները փորձաքննության են ենթարկում, ընտրում գիտական թեմաների հայտերը և դրանք ներկայացնում նախարարության հաստատման:
4. Նախարարությունը մրցույթի մասին հայտարարությունը հաստատում և հրապարակում է զանգվածային լրատվությամբ գիտական թեմաների հայտերը ներկայացնելու համար սահմանված վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ: Մրցույթի հայտարարությունը պարունակում է համառոտ տեղեկություններ մրցույթի անցկացման նպատակի ու կարգի, մրցույթին մասնակցելու հիմնական պայմանների, այդ թվում նաև մրցույթի հրավեր ստանալու պայմանների ու գիտական թեմաների հայտերը կազմելու և ներկայացնելու կարգի մասին::

5. Նախարարությունը մրցույթի հրավերը հաստատում է և տրամադրում է մրցույթի հրավեր ստանալու գրավոր պահանջ ներկայացրած անձին նման պահանջ նախարարություն մուտքագրվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում: Մրցույթի հրավերի պատճենահանման և առաքման ծախսերը ֆինասավորում են մրցույթի հրավեր ստանալու պահանջ ներկայացրած անձի հաշվին:
6. Մրցույթի հրավերը պետք է պարունակի՝
ա/ հղում հրապարակված մրցույթի մասին հայտարարությանը ի լրումն որի տրամադրվում է տվյալ մրցույթի հրավերը.
բ/ մրցույթի հայտերի պատրաստման հրահանգները.
գ/ մրցույթի մասնակիցներից /այսուհետև՝ մասնակից/ պահանջվող որակավորման տվյալների չափանիշները և դրանց գնահատման կարգը.
դ/ թեմաներին ներկայացվող հիմնական պայմանները.
ե/ մրցույթի հայտի ֆինանսական նախահաշվի կազմման ձևը.
զ/մրցույթի հայտերը ներկայացնելու պայմանները, ներառյալ ձևը, տեղը, ժամկետը, մրցույթի հայտի լեզուն.
է/ այն եղանակները, որոնցով մասնակիցները կարող են պահանջել մրցույթի փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումներ և մասնակիցների հետ կազմակերպվելիք հանդիպումների մասին տեղեկատվություն.
ը/ մրցույթի հայտերի բացման օրը և ժամը, քննարկման ու գնահատման կարգը.
թ/ նախարարության կամ խորհրդի գործողությունները կամ որոշումները, մասնակցի բողոքարկելու իրավունքի պարզաբանումները.
ժ/ տեղեկատվություն նախարարության կամ խորհրդի կողմից մրցույթի հայտերը մերժելու հիմքերի վերաբերյալ.
ժա/ մրցույթի հայտը ներկայացվում է մրցույթի հրավերով սահմանված կարգով: Մրցույթի հրավերով սահմանված տեղեկություններից բացի մրցույթի հայտը ընդգրկում է տեղեկություններ՝
ա/ թեմայի և դրա ղեկավարի, գիտական հաստատության կամ բուհի, ինչպես նաև թեմայի իրականացման աշխատանքներում ընդգրկվող մասնակիցների վերաբերյալ: Փորձարարական բնույթի թեմաների հայտերում ընդգրկվող հաստիքների նվազագույն թիվը սահմանվում է 5-ը:
բ/ ներկայացվող թեմայի հիմնավորման նպատակի խնդիրների, ակնկալվող արդյունքների, խնդրի լուծման ուղիների և թեմայի կատարման ժամկետների, դրա կատարման նպատակով առկա և ձեռքբերվող սարքավորումների, նյութերի, միջոցների ու դրա համար անհրաժեշտ գումարների մասին: Կարող են նախատեսվել արշավախմբերի կազմակերպում և գիտագործնական միջոցառումների անցկացում: Թեմաների կատարման ժամկետները, որպես կանոն, նախատեսվում են մինչև 3 տարի:
8. խորհուրդը նախարարության սահմանած կարգով փորձաքննության է ենթարկում ներկայացված յուրաքանչյուր հայտը և եզրակացություն տալիս դրա հաստատման նպատակահարմարության վերաբերյալ: Խորհուրդը հայտերի փորձաքննության ժամանակ գնահատում է ներկայացված հայտը գիտական կամ գիտատեխնիկական նորույթը, վերլուծում թեմայի իրականացման նախադրյալները, ծավալը և դրա իրականացման ժամկետները, ֆինասական արդյունավետությունը: Խորհուրդները

կարող են մշակել և օգտագործել տվյալ թեմային բնորոշ հայտերի գնահատման լրացուցիչ չափանիշներ:
9. Խորհուրդը ներկայացված բոլոր հայտերի վերաբերյալ եզրակցությունները հաստատելուց հետո, հինգ աշխատանքային օրվա ընթացքում, դրանք ներկայացնում է նախարարություն հայտերի վերջնական ընտրության համար: Նախարարությունը, ելնելով տվյալ տարվա հաջորդող տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծով թեմատիկ ֆինանսավորման համար նախատեսվող հատկացումների առավելագույն չափից և ներկայացված թեմաների գծով ուսումնասիրությունների կատարման նպատակահարմարությունից, հաստատում է այն թեմաների ցանկը, որոնց ծախսերի նախահաշիվները ներառվելու են նախարարության կողմից պատրաստվող տվյալ տարվան հաջորդող տարվա բյուջետային ֆինասավորման հայտում: Բյուջետային ֆինասավորման հայտում կարող են ներառվել միայն խորհրդի դրական եզրակացություն ստացած թեմաները:
10. Խորհուրդների բացասական եզրակացության մասին տեղեկացվում է թեմայի ղեկավարին /հեղինակին/: Խորհրդի եզրակացությունը կարող է բողոքարկվել նախարարությունում՝ թեմայի ղեկավարի /հեղինակի/ կողմից՝ վերջինիս տեղեկանալուց 15 օրվա ընթացքում: Խորհուրդը նախարարության ներկայացմամբ տալիս է կրկնակի եզրակացություն: Եզրակացության հիման վրա նախարարության ընդունած որոշումը վերջնական է:

III. Պայմանագրերի կնքումը, թեմաների կատարումն ու ֆինասավորումը

11 Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հաստատումից հետո, բյուջեով թեմատիկ ֆինասավորման համար նախատեսված հատկացումների շրջանակներում, նախարարությունը հաստատում է տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին թեմատիկ ֆինասավորման գծով ֆինասավորվող թեմաների ցանկը և դրանց ղեկավարների ցուցակը, ինչպես նաև յուրաքանչյուր թեմայի կատարման համար նախատեսվող հատկացման չափը:
12. Նախարարությունը, սույն կարգի 11-րդ կետում նշված ցանկը և ցուցակը հաստատելուց հետո, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, նշված ցանկում ընդգրկված թեմաների ղեկավարների հետ կնքում է պայմանագրեր: Ընդ որում, նախարարությունը Հայաստանի հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 13-ի N 556 որոշմամբ հաստատված << Գնումների բնութագրերի հաստատման և նախնական հսկողության կարգով>> նախատեսված պատասխանատու ստորաբաժանման իրավասությունը վերապահում է տվյալ թեմայի հաստատման մասին դրական եզրակացություն ներկայացրած խորհրդին: Թեմայի ղեկավարի և մասնակիցների միջև հարաբերությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ:
13. Սույն կարգի 12-րդ կետում նշված պայմանագրերում, բացի Հայաստանի Հանրապետության օրենդրությամբ սահմանված պարտադիր պահանջներից, պարտադիր կարգով նշված են նաև համապատասխան թեմաների անվանումները, դրանց ղեկավարների ազգանունները, գիտական կազմակերպության կամ բուհի անվանումը, որտեղ պետք է իրականացվի թեման, թեմայի իրականացման ժամկետներն ու պայմանները, ֆինասավորման չափը, ինչպես նաև հաշվետվության

ձևերը, թեմայի վերջնական կատարողական ակտերի ներկայացման ժամկետները, թեմայի արդյունքների գնահատման կարգը:
14. Գիտական կազմակերպության /բուհի/ տնօրենի /ռեկտորի/ և թեմայի ղեկավարի հարաբերությունները կարգավորվում են առանձին պայմանագրով, որտեղ նշվում է տնօրենի /ռեկտորի/ իրավասությունը թողնված թեմայի ֆինասավորման տոկոսը: Այդ գումարով տնօրենը /ռեկտորը/ ապահովում է գիտական կազմակերպության /բուհի գիտական մասի/ գործունեությունը և ստեղծում թեմայի կատարման համար անհրաժեշտ պայմաններ:

IV. Թեմաների իրականացման վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելը, դրանց արդյունքների գնահատումը

15. Թեմաների իրականացման մասին կազմվում են ընթացիկ և ամփոփիչ հաշվետվություններ, որոնց ներկայացնելու ժամկետները սահմանվում են նախարարության կողմից թեմայի իրականացման ժամկետի ավարտից առնվազն 20օր առաջ:
16. Նախարարությունն ընդունում, հաշվառում է հաշվետվությունները և դրանք տրամադրում համապատասխան փորձագիտական խորհուրդներին: Գիտական կազմակերպություններում աշխատող գիտնականների թեմաների հաշվետվությունները ներկայացվում են անմիջապես ղեկավարների կամ կատարողների կողմից:
17. Թեմաների շարունակման նպատակահարմարությունը որոշելու, ինչպես նաև ավարտվող աշխատանքների վերջնական արդյունքները վերլուծելու, դրանց ներդրումը և կիրառումը երաշխավորելու հնարավորությունները պարզելու համար հաշվետվությունները գնահատվում են փորձագիտական խորհուրդներում նախարարության կողմից սահմանված ժամկետներին և չափանիշներին համապատասխան, և հաստատվում է նախարարության կողմից:
18. հաշվետվությունների գնահատման ժամանակ հաշվի են առնվում արդյունքների նորույթը և դրանց նշանակությունը, հրատարակումների կամ այլ վերջնական արդյունքներում կատարողների ներգրավվածության աստիճանը: Եզրակացության մեջ հատուկ նշվում է թեմայի շարունակության նպատակահարմարությունը: